կայանալ անաչառ դատաւորին՝ երբ մեր ականջին հնչէ Տիրոջ հրամանը, «Տուր զհամար տնտեսութեան քոյ։ Աստուծոյ վճռական ձայնն է այս, որ պէտք է միշտ հնչէ մեր սրտին ու հոգիին խորերէն, արդարութեան շեփորն է այն՝ որ պէտք է միշտ արթնցնէ մեր քնացած խղճմտանքը, եւ ոտքի կանգնեցնէ պատասխանատուութեան պարտականութիւնը։

Ո՜վ քրիստոնեայ, եթէ աշխարհի կեանքին ընթացքին չունկնդրես այս ձայնին, եթէ ականջ չդնես այդ փողին եւ ըստ այնմ չպատրաստուիս, գիտցած եղիր թէ կը պարտուիս, ոչ միայն այս կեանքին մէջ, այլ եւ կը կորսնցնես յաւիտենական կեանքի տրիտուրն ալ։

Սիրելի քրիստոնեայ եղբայրներ եւ քոյրեր, այնպէս մը ապրեցէք՝ որ յաղթէք աշխարհին եւ մահուան, ինչպէս մեր Փրկիչը յաղթեց եւ ատաթուր կոխեց մահը։

Ինչ որ ունինք այս աշխարհին վրայ մերը չէ, մենք տնտեսներ ենք, պիտի գայ ժամանակ, եւ ատիկա անխուսափելի է, երբ պիտի հրաւիրուինք մեր տնտեսութեան հաշիւը տալու, այդ ժամանակը բընաւ թէական եւ կասկածելի չէ, այլ ամենէն ստոյգ բանն է, աշխարհային ամէն կեանքի վախճանը՝ մահը։ Ինչ որ պիտի մնայ մեզի, եւ պիտի կրնանք տանիլ մեզի հետ մեր հոգին է, եւ մեր սուրբ կեանքը, մեր բարի գործերը։ Ուրեմն ջանանք մամոնայէն բարեկամներ շահիլ քանի որ տրնտես ենք եւ առիթը ունինք։ Քաջ գիտնանք թէ չենք կրնար ծառայել թէ՛ Աստուծոյ եւ թէ մամոնային։

Ուստի օգտուինք մամոնայէն, զայն բարի նպատակներու համար կիրարկելով, հաւատարիմ ըլլանք քիչ բաներու մէջ՝ իբրեւ տնտեսներ Աստուծոյ, որպէսզի աշխարհի եւ մեր հոգիներուն Տէրը, մեզ յաւիտենական օթեւաններուն արժանի ընէ, փառաւորելու համար զանուն ամենասուրբ Երրորդութեան, Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, յաւիտեանս, ամէն։

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

ՏԱՂ Ի ՄԽԻԹԱՐԷ

Սուրբ Աստուածածնի կուսին
անճառս հարսին
Ցանկալի զուարթնոց գնդին
հրեղինաց դասին,
Արեգակնափայլ դիմին
պայծառ պատկերին,
Լի եւ բոլորեալ լուսին
վառվառ աստեղին.
Աւղազնաց թռչուն զարմին
սուրբ սիրամարգին,
Բաց եւ վայելուչ արծուին
եւ բուն բազային,
Աղաւնի ոսկի փետրին
մաքուր տատրակին,

digitised by A.R.A.R.@

Ծիծըռնահընչող լեզուին
　　　　　　　　կարմրոտ կաքաւին.
Անմեղ անարատ գառին,
　　　　　　　　անփորձ երնջին,
Նաշին կնդրուկ ստաշխին,
　　　　　　　　կինամոն խընկին,
Հաշտութեան պատարագին,
　　　　　　　　փրկութեան զոհին,
Ճշմարիտ դաբիրային,
　　　　　　　　սուրբ տապանակին,
Երկնային մանանային
　　　　　　　　ոսկի սափորին,
Մատամբ ձեւագրեալ բանին,
　　　　　　　　քարետախտակին,
Տեառնակոխ աղիւսակին,
　　　　　　　　գոյն շափիւղային,
Սինայ անմատոյց լերին
　　　　　　　　անկէզ մորենին,
Ծաղկեալ չոր գաւազանին
　　　　　　　　որ ի խորանին,
Տուփ անոյշ քառից խընկին
　　　　　　　　ոսկի բուրուառին,
Գեղմանըն ցաւղով լըցեալ
　　　　　　　　առ Գէդէոնին,
Առիթ յաղթութեան եղեալ
　　　　　　　　ջահին ի սափորին,
Ջրհոր կնքեալ աղբիւրին
　　　　　　　　փակեալ պարտէզին.
Բլուր մաքուր կնդրըկին,
　　　　　　　　հովիտ շուշանին,
Անարատ մաքուր հարսին
　　　　　　　　անախտ փեսային,
Կարմիր եւ սպիտակ այտին,
　　　　　　　　որ յերգսըն պատմին,
Ձայն որ ոչ բառնայր երկին
　　　　　　　　բարձաւղ ի գրկին
Եւ աւրհնէր զհայրըն անծին
　　　　　　　　զորդին միածին.
Զհոգին ճշմարիտ յաւէտ
　　　　　　　　փառակից նոցին
Բարեբանեսցուք եւ մեք
　　　　　　　　ընդ Աստուածածնին:

digitised by A.R.A.R.@